

# ՍՈՂՈՄՈՆ ԹԵՀԼԻՐԵԱՆԸ ԱՆԳԼԵՐԷՆ

Posted on February 10, 2023 by Keghart




Category: [Opinions](#)



**Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 8 փետրուար 2023**

**REMEMBRANCES, THE ASSASSINATION OF TALAAT PASHA**

Արա Սարաֆեան բանասեր-պատմաբան է, ծնունդով Կիպրոսէն, երիտասարդ տարիքին հաստատուած է Անգլիա: 1992-ին Միշիկըն նահանգի Էն Արպըր ([Ann Arbor](#)) համալսարանանէն ներս եղած է հիմնադիրներէն մէկը «Կոմիտաս հիմնարկ»ը (Gomidas Institute (GI, ԿԻ), որ ուսումնական անկախ հիմնարկ մըն է: Կեդրոնը հաստատուած է Լոնտոնի մէջ եւ ճիւղաւորումներ ունի ԱՄՆ-ի Քլիվլենտ քաղաքին մէջ: Հիմնարկի գործունեութիւնը կ'ընդգրկէ հետեւեալ բնագաւառները՝ հետազոտութիւն, հրատարակութիւն եւ ուսումնական ծրագիրներ:



Հրատարակած է վաւերագրական նիւթեր, յուշապատումներ-յուշագրութիւններ, մենագրութիւններ եւ այլ գործեր ժամանակակից հայոց պատմութեան նիւթերով: ԿԻ-ն միաժամանակ կը կազմակերպէ օգտաշատ դասախօսութիւններ եւ գիտական նստաշրջաններ: ԿԻ-ն ունի իր քառամսեայ պարբերականը՝ Armenian Forum (այժմ դադրած):

Վերջերս, 22 Յունուար 2023-ին, Լոս Անճելըսի մէջ հետաքրքրուողներուն համար բացառիկ առիթ մը ներկայացաւ ծանօթանալու Կոմիտաս հիմնարկի (ԿԻ) հերթական հրատարակութեան հետ, որ կը կոչուի REMEMBRANCES, THE ASSASSINATION OF TALAAT PASHA (2022, Լոնտոն, «Վերյիշումներ (Թալէաթի Ահաբեկումը)», գրի առնուած Վահան Միրախորեանի կողմէ:

Գիրքին ներկայացումը իրագործուեցաւ շնորհիւ գրասեր Մելգոնեանցի Լարա Գայայեան Ճենքինգի հիւրընկալութեան՝ իրենց ընդարձակ տան մէջ: Ներկայ էին անլի քան յիսուն մասնակիցներ, որոնց մեծ մասը ՄԿՀ-ի շրջանաւարտներ էին: Իր ներկայութեամբ յատուկ շուք մը կու տար Կլենտէյլի քաղաքապետ Արտի (Արտաշէս) Քացախեան: Օրուանյ հանդիսավարն էր տողերուս հեղինակը: Փրոֆ. Արա Սարաֆեան ներկայացուց ԿԻ-ի հիմնադրման հետ առնչուող հանգամանքները, նպատակը եւ իրագործումները: Այս անդրադարձաւ թուրք մտաւորականներու հետ ունեցած փորձառութիւններուն, խարբերդ եւ այլուր ունեցած հանդիպումներուն: «Ընելիք շատ բան կայ եւ դեռ շատ

**ճամբայ ունինք կտրելու մեր առաքելության մեջ», ըսաւ ան:**

Ճիշդ ընդունելության ընթացքին հանդիսավարի առաջնորդութամբ ելոյթն ունեցան ներկաներ, որոնցմէ կ'առանձնացնեմ Հայաստանի Գօշ գիւղի վերակենդանացման ռահվիրաներ Տէր եւ Տիկ. Ասպետ եւ Այդա Փողարեանները (ՄԿՀ-ի շրջանաւարտներ), California Courier թերթի սեփականատեր եւ խմբագիր Յարութ Սասունեան:

Վերջաւորության Տէր եւ Տիկ. իրաւաբաններ Լարա եւ Ճոհնսոն Ճենքինզներ շնորհակալութիւն յայտնեցին ներկաներուն եւ յանձնառու եղան նման հանդիպումներ կազմակերպել նաեւ ապագային:

Գիրքին անգլերէն թարգմանութիւնը կատարած Է Պետո Տեմիրճեան (ՄԿՀ-եան 1994-ի շրջանաւարտ): Նախաբանի հեղինակն Է Գարլա Կարապետեան, որ հանգամանօրէն կը ներկայացնէ Ս. Թեհլիրեանի դատավարութեան գերմաներէն բնագրին հայերէն թարգմանութեան եւ ինքնակենսագրականը անգլերէն թարգմանելու հանգամանքները: Կ'իմանանք թէ Մեծ վրիժառուի ցանկութիւնը եղած Է իր ինքնակենսագրութեան

ընդմէջէն անգլիախօս ընթերցողին ցոյց տալ ոչ միայն իր սրբազան ահաբեկության ընդնէջէն ցեղասպանության ամբողջ ողբերգութիւնը, այլեւ յետ ցեղասպանության դէպքերն ու իր ապրումները:



**Յուշարձան, Ֆրեզիօ**

Եւ այսպէս, Սողոմոն Թեղիրեանի մահէն անցի քան կէս դար ետք, անգլիաբոս սերունդները ի վերջոյ հաղորդակից կը դառնան այժմ Ֆրեզնոյի «Արարատ» գերեզմանատան մէջ արդարութեան վերականգնման սպասող ազգային այս կուռքի անցած ուղիին:

Առանձին ուսումնասիրութիւն մըն է Փրոֆ. Արա Սարաֆեանի «Ներածական»ը, ուր մանրամասնօրէն եւ հանգամանօրէն կը խօսուի սպանութեան կամ ահաբեկչութեան զանազան հանգամանքներուն, կազմակերպիչներուն եւ տարածուած տարբեր տարբեր մեկնաբանութիւններու մասին: Արա Սարաֆեան պատնաբանի բարեխղճութեամբ եւ արհեստավարժութեամբ տուած է բազմաթիւ տողատակի բացատրութիւններ, մեկնաբանութիւններ եւ ծանօթագրութիւններ: 300 էջերէ բաղկացած այս «Վերլիշումներ»ը գիրքը ճոխացուած է նաեւ վաւերագրական նկարներով:

Ահաւասիկ հրատարակութիւն մը, որ արտերկրի մէջ հաստատուած ամէն հայ ընտանիք պէտք է ունենայ իր գրադարանին մէջ եւ պահէ աչքի լոյսի պէս եւ չբաւարարուի այդքանով, այլ յանձնարարէ զաւակներուն ու թոռներուն ծանօթանալ ու հաղորդակցուիլ հոն արտայայտուած գաղափարներուն հետ:

**There are no comments yet.**